Ծուշանիկ Կուրղինյան

Այդ ես եմ անհաղթ

Այդ ես եմ անհաղթ, հսկում ձեզ վրա երգով հոգեթով.
Այդ ես եմ անքուն ձեզ բախտ երազում մայրական գթով.
Ղողանջս վայրագ հնչում է արագ
Ձեզ համար կյանքի, ով խորթ զավակներ,
Որ ծախված օրով ապրուստ կը մուրաք
Ու չեն չորանում տանջանքիդ ակներ:
Ղողանջս հնչուն հնչում է արագ
Ձեր անփառք կյանքի հզոր շռինդով —
Միշտ ոլորտացող պայքարին պապակ
Անհագ վրեժի և ոխի խինդով:
Այդ ես եմ կայտառ ու ըմբոստ հոգով՝ ձեզ հետ մնացի,
Այդ ես ձեր սիրուն թողի մեղեդիս նուրբ ու կանացի . . .

1908